ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Քաղաքացիների դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ
/2015թ. /

	1-ին կիս	2-րդ կիս.	2015թ.
1. Ստացվել են նամակներ ընդամենը	1099	1051	2150
որից՝			
աջակցություն	1085	1041	2125
առաջարկություն	2	1	3
հարցում	4	3	*7*
բողոք	*8*	*7*	*15*
այդ թվում՝			
կրկնակի	2	8	10
կոլեկտիվ	22	20	42
3. Ըստ հարցի բնույթի՝			
բնակարանային	14	10	24
կոմունալ-կենցաղային	16	18	34
շինարարական	5	3	8
արդձեռ/տրանսկապ/	3	2	5
գյուղատնտեսական	5	7	12
բնութ. պահպանութ.	2	2	4
առևտրի	1	2	3
կենսաթոշակի և նպաստի	6	6	12
առողջապահության	106	91	197
կրթական և մանկ.հիմն	87	45	132
գիտութ.կուլտուրա	-	2	2
ֆինանսական	646	749	1395
օրենսդրական	1	1	2
քաղ. և որդեգրման	3	3	6
աշխ.տեղ և հաշվառման	52	36	88
հողհատկացում և հողօգտ.	1	4	5
միգրացիոն ծառ. վերաբերյալ	94	42	136
ապարատային	30	18	48
այլ հարցեր	27	10	37

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2015 թվականին քաղաքացիների ընդունելության և նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2015 թվականին քաղաքացիներից ստացվել է 2150 դիմում, որից 2125-ը՝ աջակցության խնդրանքով, 15-ը՝ բողոք, 3-ը՝ առաջարկություն, 7-ը՝ հարցում:

Գյուղատնտեսական, կոմունալ-կենցաղային, բնակարանային, նպաստի և կենսաթոշակի հարցերի վերաբերյալ 82 դիմումներից 79-ին տրվել են սպառիչ պատասխաններ: Աշխատանքի տեղավորման մասին 88 դիմումներից դրական լուծում է ստացել 16-ը, մյուսները վերցվել են հաշվառման: Միգրացիոն ծառայության վերաբերյալ 136 դիմումներից դրական լուծում է ստացել 89 դիմում:

Տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների իրավասություններին առնչվող 63 դիմումներ վերահասցեագրվել են համապատասխան համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին:

Նյութական օգնության խնդրանքով մարզպետին դիմած 1395 քաղաքացիներից դրամական օգնություն է ցուցաբերվել 1232 հոգու: Անվճար բուժսպասարկման հարցով դիմած 76 քաղաքացիներից բավարարվել է 62-ի խնդրանքը, 9 քաղաքացու տրվել է ծննդօգնության պետական հավաստագիր, 120 հոգու՝ առողջարանային ուղեգիր:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը: 2015 թվականին կատարվել է 869 քաղաքացիների ընդունելություն:

Բացի այդ, մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ կատարվել են արտահերթ ընդունելություններ:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում քաղաքացիների անհատական ընդունելությունը կազմակերպվել է ամենօրյա, աշխատանքային կարգով: